

կամ աւելի՝ առժամանակեայ վարիչ անուանեցաւ, եւ տարի մ'ետքը՝ 1878ին Վեհ. Սուլթան Ապտիւլ Համիտ Խանէն Րէ-Լեյէ Ուլայի Բ. աստիճանն ընկալաւ, որ ցոյց է Օսմանեան Պետութեան առջեւ ունեցած բարձր համարման: 1880ին Միհրան Պէյ փողերանոցէն ելած ատեն՝ Սերգիս Պէյն ալ հօրն ընկերացաւ:

Երկրորդն է Լտիկար Պէյ, (ծն. 1854 Յունր. 21:) 1888 Յուլիս 24ին՝ Ալահվէրտի Յովհաննէս Էֆէնտիի դստեր՝ Նեկտար օրիորդին հետ ամուսնացաւ: Երրորդն Լէոնս Պէյ (ծն. 1856 Փետր. 22) որ 1881 Յուլիս 22ին Մըսթուլեան Պօղոս Պէյի Մարիամ դստեր հետ ամուսնացաւ: Իսկ չորրորդն Հրանտ Պէյ (ծն. 1862 Յունուար 25): Երեք եղբարք տարրական ուսումն ի տան ընդունելէն ետեւ, Բարիզի այլեւայլ դպրոցներն առաքուեցան, ուր լաւ դաստիարակութիւն առած՝ դարձան ի Վ. Պոլիս:

